

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ  
ԱԿԱԴԵՄԻԱ  
ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՈՎՍԵՓՅԱՆ ՀԱՄՄԻԿ ԳԱԳԻԿԻ

ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ  
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՁԵՌԱԳՐԵՐՈՒՄ

Ժ. 01. 01- «Հայ միջնադարյան և նոր գրականություն»  
մասնագիտությամբ  
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի  
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ  
**Աելիտա Գուրգենի Դոլուխանյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների դոկտոր,  
դոցենտ **Եվա Ժորայի Մնացականյան**

բանասիրական գիտությունների թեկնածու  
**Նաիրա Իլյուշի Թամամյան** (Աթենք)

Առաջատար կազմակերպություն՝

Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2024 թ. մայիսի 31-ին՝ ժամը 12:30-ին, ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲՈՒԿ-ի Գրականագիտության 003 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի փող., 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2024 թ. ապրիլի 23-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝  
բանասիրական գիտությունների թեկնածու

Ս. Ա. Մարգարյան

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԳՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

### ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆ ՈՒ ԱՌԱՐԿԱՆ

Սույն հետազոտության **օբյեկտը** Գրիգոր Մագիստրոսի ստեղծագործությունների՝ Մաշտոցի անվան Մատենադարանի՝ փաստահարուստ և գիտական արժեք ներկայացնող ձեռագիր ընդօրինակություններն են, որոնք հեղինակի արժարժած թեմաների ընկալման նոր ուղիներ են ստեղծում, **առարկան**՝ բովանդակային և կառուցվածքային հարցերի համատեքստում դժվարություններ առաջ բերող և գիտական հիմնավորումներ պահանջող ստեղծագործությունները:

### ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ՄՇԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Թեև Գրիգոր Մագիստրոսի (990-1058) գրական լեզուն բանասիրության մեջ մեծ դժվարություններ է առաջ բերել վերջինիս ստեղծագործության (հատկապես թղթերի) բովանդակային ընկալման տեսակետից, այնուամենայնիվ նրա շուրջ հետաքրքրությունների սահմանն անցնում է նույնիսկ հայ գրականագիտության շրջանակը: Մինևույն ժամանակ, եղած ուսումնասիրությունները վկայում են, որ Մագիստրոսի՝ իմաստային ընկալման առումով «ստեղծվածային» մի շարք գրվածքներ ցարդ չուսումնասիրված էջերից են և ունեն համակողմանի քննության անհրաժեշտություն: Բացի այդ՝ առաջնային են հեղինակի երկերի գործածությանն ու ստեղծագործական առանձնահատկությունների (կառուցվածքային, ժանրային հատկանիշներ, աշխատատեղանակ) վերհանմանն առնչվող հարցերի պարզաբանումը:

Գրիգոր Մագիստրոսի թղթերի երկու ամբողջական հրատարակություն կա: Առաջին անգամ նրա թղթերը, ըստ չորս ձեռագիր աղբյուրների, հրատարակել է Կարապետ Կոստանյանցը 1910 թ. Ալեքսանդրապոլում, ապա 2012 թ. Երևանում լույս է տեսնում Մագիստրոսի ստեղծագործության՝ գրականագետ Գոհար Մուրադյանի բացառիկ գիտական արժեք ունեցող հրատարակությունը, որը ներառում է ոչ միայն հեղինակի նամականիս, այլև «Հազարտողեան» ստեղծագործությունն ու «Մեկնություն Քերականին»: Վերջում կցված են նաև «Խառն հատուածք», «Չորս են. . .» միավորները: Չափաձո ծավալուն ստեղծագործության քննական բնագիրը կազմել են գրականագետներ Գոհար Մուրադյանը և Աբրահամ Տեղյանը:

«Մեկնություն Քերականիի» քննական բնագիրը կազմել են նաև հայագետ Նիկողայոս Ադոնցն ու գրականագետ Լևոն Խաչերյանը:

Ղևոնդ Ալիշանը 1850-ին «Բազմավեպում» լույս տեսած «Ազգային վիպասանություն» հոդվածում անդրադառնում է Արտաշես արքայի հիվանդության և մահվան դիպվածներին՝ հիշատակելով Մագիստրոսի վիպական այս դիպվածի՝ վիպասանությունից օգտվելու հանգամանքը:

«Գրիգոր Մագիստրոսի մօտ Արտաշես Ա-ի վերաբերեալ պահպանուած վիպական հատուածի մասին» խորագրով հետազոտություն ունի միջնադարագետ Լևոն Խաչիկյանը:

Գրականագետ Շավիղ Գրիգորյանն ունի դիտարկումներ Գրիգոր Մագիստրոսի հիշատակած «Գուսանական» երգերի վերաբերյալ:

Գ. Մագիստրոսը եղել է ֆրանսիացի հայագետ Վիկտոր Լանգուայի գիտական հետաքրքրության կենտրոնում: Վերջինս Մագիստրոսի թղթերը թարգմանել է ֆրանսերեն. զգալի մասը՝ համառոտ: Հայագետը գրում է, որ հեղինակն իր նամակներում դրսևորվում է որպես փիլիսոփա, աստվածաբան, դիցաբան, պատմաբան, բնագետ և այլն: Միջնադարագետ Աելիտա Դոլուխանյանն իր «Վիկտոր Լանգուայի հայագետ» աշխատության մեջ հանգամանորեն անդրադառնում է բոլոր այն սկզբունքային հարցերին, որոնք հայագետի կողմից Մագիստրոսի թղթերի ֆրանսերեն թարգմանությունը դարձրին անհրաժեշտ:

Անգլիացի հայագետ Ֆրեդերիկ Կոնիբերը Մագիստրոսի թղթերը ներկայացնում է որպես Պավլիկյանների մասին հիմնական աղբյուր Գրիգոր Նարեկացու և Արիստակես Լաստիվերցու երկերից հետո:

1900-ին «Բանասերում» լույս է տեսնում Նորայր Բյուզանդացու՝ «Գրիգոր Մագիստրոսի «Գամագտական» թղթին մեկնությունն ի նմին իսկ ի Մագիստրոսէ» հոդվածը, որն արժեքավոր է Մագիստրոսի «անլուր», «անձանոթ բառերով» թղթերից մեկը հասկանալու տեսակետից<sup>1</sup>, և որը հետագայում սկզբունքային նշանակություն է ունենում նույն թղթի մեկ այլ մեկնաբանի՝ Գաբրիել Մենեվիշյանի համար:

Մխիթարյան միաբանության անդամ, «Հանդես ամսօրեայի» խմբագիր Գ. Մենեվիշյանը ընթերցողների ուշադրությունը հրավիրում է «Գամագտականի» ամբողջական մեկնաբանությանը: Հայագետն իր կատարած աշխատանքի արժանիքներից է համարում այն, որ ներկայացրել է Մագիստրոսի և հույն կատակերգակ Արիստոփանեսի գրական առնչությունները հաստատող օրինակներ:

Հրաչյա Աճառյանը «Գամագտականից» հետո երկրորդ «անիմանալի» գրվածքը համարում է «Մրգուզ փանաքը» և ստանձնում է այն լուծելու խնդիրը («Գրիգոր Մագիստրոսի Մրգուզ փանաքի լուծումը»<sup>2</sup>):

Ըստ Գարեգին Զարբհանայանի՝ Մագիստրոսի թղթերից ավելի «ոլորիմաց» են վարդապետական թղթերը: «Մեկնություն Քերականին» քերականական գրվածքների մեջ գնահատում է որպես «գլխաւոր և միակ երկափրութիւն»<sup>3</sup>:

Մագիստրոսի կենսագրությանը, ուսման ծրագրին, թարգմանություններին, թղթերին, չափածո գրվածքներին անդրադարձել է Մանուկ Աբեղյանը: Հայագետը «Հազարտողեանն» արժևորում է միայն տաղաչափական տեսակետից: Գրականագետ Հասմիկ Միմոնյանն, ուսումնասիրելով կաֆայի ժանրը հայ միջնադարյան պոեզիայում, կաֆայի հատկանիշներից նույնահանգության մասին խոսելիս անդրադարձել է նաև «Հազարտողեանին»: Վարագ Ներսիսյանն ընդգծում է չափածո այս երկի ստեղծման կրոնական կողմը, իսկ Սարգիս Մխիթարյանն այն արժևորում է գեղարվեստական իդեալի կարևորության տեսակետից:

<sup>1</sup>Բյուզանդացի Ն., Գրիգոր Մագիստրոսի «Գամագտական» թղթին մեկնությունն ի նմին իսկ ի Մագիստրոսէ, «Բանասեր» հանդես հնախօսական, պատմական, լեզուաբանական եւ քննական, Պարիս, 1900, հ. Բ, էջ 121:

<sup>2</sup>Տե՛ս Աճառեան Հ., Գրիգոր Մագիստրոսի Մրգուզ փանաքի լուծումը, «Հանդես ամսօրեայ», Վիեննա, 1923, թիւ 5-6, Մայիս-Յունիս, ԼԷ. տարի, էջ 241-256:

<sup>3</sup>Զարբհանայեան Գ., Պատմութիւն հայ հին դպրութեան (Դ-ԺԳ դար), բարձրագոյն դպրոցաց համար, Վենետիկ, Մխիթարեան տպարան, 1932, էջ 582:

«Հայրենիքի ձայն» շաբաթաթերթի համարներից մեկում տպագրվում է Ասատուր Մնացականյանի «Գրիգոր Մագիստրոսի մի տաղի հետքերով» հոդվածը: Ուսումնասիրությունը նվիրված է «Առ որդին իր գաւրանայ ի պատերազմին հասանելոյ ի չարաբաստ ծերունոյն Նիկաւայ այլարար» չափածո թղթին: Այս նամակին անդրադարձել է նաև պատմաբան Հրաչյա Բարթիկյանը: Վերջինս այն կարևորում է Գրիգոր Մագիստրոսի քաղաքական կողմնորոշման հարցի տեսակետից: Հեղինակն, անհաշող համարելով Կ. Կոստանյանցի վերլուծությունը, փորձում է պարզել խնդրո առարկա բանաստեղծության մեջ հիշատակված Նիկողայոս Բուլղարի անձնավորության պատմականության հարցը<sup>4</sup>, որին անդրադարձել է նաև Գևորգ Աբգարյանը<sup>5</sup>:

Ա. Մնացականյանն անդրադարձել է նաև «Առ հայրն Վարազայ» թղթին: Կ. Կոստանյանցի մոտեցումն այն մասին, որ Մագիստրոսն իր նամակով Վարազա վանքի վանահորը գրում է խոզերի պիղծ լինելու մասին, միջնադարագետը համարում է «ոչ ճիշտ» և ընդգծում<sup>6</sup> թղթի ուշադիր քննությունը ցույց է տալիս, որ Մագիստրոսը նկատի է ունեցել ոչ թե խոզ-կենդանիներին, այլ Վարազա վանքի միաբաններին:

Մագիստրոսի՝ թոնդրակյան շարժմանն ուղղված գաղափարախոսությանն անդրադարձել է հայագետ Բարսեղ Սարգիսյանը: Վերջինս բարձր է գնահատում «աչալուրջ իշխանի» դերը թոնդրակեցիների մոլորություններն ու գործած ամենօրյա ոճիրները բացահայտելու հարցում:

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գևորգ Գրիգորյանն իր 1982 թ. լույս տեսած «Գրիգոր Մագիստրոսը որպես փիլիսոփա» հոդվածում անդրադարձել է հայ փիլիսոփայական մտքի պատմության մեջ ունեցած նրա դերին:

Գ. Մագիստրոսի թղթերում պարունակած նորույթներին անդրադարձել է Բաբկեն Չուգասզյանը: Նրա ուշադրությունը հատկապես գրավել են «Պատասխանի թղթոյն տեսոն Յովհաննիսի Սինեսաց արքեպիսկոպոսի յարագս Վահրամայ հարեղբար իւրոյ կատարման մարտիրոսութեամբ» ծավալուն թղթին «ընդելուզված մի քանի չափածո հատվածներ, որոնք հայ միջնադարյան աշխարհիկ բանաստեղծության թանկագին մասունքներից են»<sup>6</sup>:

1992-ին Վենետիկում լույս տեսած «Պատմութիւն հայ հին գրականութեան» գրքում Կյուրեղ Զիպարյանն առանձին բաժին է հատկացրել Մագիստրոսին, որն ամբողջական պատկերացում է տալիս վերջինիս կենսագրական փաստերի, հրատարակությունների և նրա մասին ուսումնասիրությունների վերաբերյալ:

Գրականագետ Արտաշես Մաթևոսյանը նույնպես կարևորել է Ա. Շիրակացու երկի վերականգման նպատակով Մագիստրոսի՝ հայրենի երկրում բարձրագույն կրթությունը տարածողի և հովանավորի ջանքերը:

Կերմանացի հայագետ Յոզեֆ Մարկվարտը հիացած է հունական դիցաբանության՝ Մագիստրոսի հմուտ իմացությամբ, միաժամանակ ընդգծում է նրա

<sup>4</sup>Բարթիկյան Հ., Գրիգոր Մագիստրոսի քաղաքական կողմնորոշման հարցի շուրջ, Հայ-քուզանդական հետազոտություններ, հ. 1, հայերեն հոդվածներ, Երևան, ԵՊՀ հրատ., 2002, էջ 271-272:

<sup>5</sup>Աբգարյան Գ., Ո՛վ է Գրիգոր Մագիստրոսի հիշատակած Նիկողաս գորավարը, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1971, <<sup>տ</sup> 9 (345), Սեպտեմբեր, էջ 41-49:

<sup>6</sup>Չուգասզյան Բ., Նորույթներ Գրիգոր Մագիստրոսի «Թղթերում», «Լրաբեր հասարակական գիտությունների», Եր., 1987, <<sup>տ</sup> 10 (538), Հոկտեմբեր, էջ 47:

ստեղծագործությունների դժվարըմբռնելի լինելը՝ համեմատելով հույն բանաստեղծ Լիկոֆրոնի հետ:

«Գրիգոր Մագիստրոսի կյանքը և գեղարվեստական ժառանգությունը» վերնագրով մենագրություն ունի գրականագետ Ս. Մխիթարյանը: Նա ներկայացնում է Մագիստրոսի կենսագրությունը, ստեղծագործությունների ձեռագրական համակարգը, գրական առնչությունները, անդրադառնում Պահլավունիների ծագման հարցին:

Ս. Մխիթարյանը Գրիգոր Մագիստրոսին ուշագրավ տեղ է հատկացրել նաև 2009-ին լույս տեսած «10-11-րդ դարերի հայ մշակութային դաշտը և հայ գրականության զարգացման առանձնահատկությունները (Գրիգոր Նարեկացի և Գրիգոր Մագիստրոս)» գրքում: Աշխատության մեջ ընդգծվում է հեղինակի դերն ու նշանակությունը միջնադարյան գրական մտքի, գիտական գրականության պատմության մեջ:

Ուշագրավ են նաև Լ. Հովհաննիսյանի, Ս. Վարդանյանի ուսումնասիրությունները՝ նվիրված Մագիստրոսի՝ բժշկության վերաբերյալ գիտելիքներին, ինչպես նաև հեղինակի երաժշտական ժառանգությունը ներկայացնող Աննա Արևշատյանի հոդվածը:

Մագիստրոսի վերաբերյալ գիտական ուսումնասիրությունները, որոնք, իհարկե, չեն սահմանափակվում վերը թվարկվածներով, արտացոլում են վերջինիս ստեղծագործության առանձնահատկությունների յուրօրինակությունն ու դրանց վերհանման կարևորությունը, միաժամանակ առաջ են բերում հեղինակի բարդ լեզվով պայմանավորված բնագրային, բովանդակային և կառուցվածքային մի շարք խնդիրների պարզաբանման անհրաժեշտությունը:

## **ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԳԻՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ**

Սույն հետազոտության առարկան արտացոլում է ընտրված թեմայի **հիմնախնդիրը**: Թեմայի **արդիականությունը** պայմանավորված է նրանով, որ խնդրո առարկա ստեղծագործությունները կա՛մ գիտական վերլուծությունների նյութ չեն դարձել, կա՛մ հակասական գնահատություններ ունեն, կա՛մ դրանց վերաբերյալ առկա գիտելիքը չի բավարարում՝ լուսաբանելու ստեղծագործության բովանդակության հիմքում ընկած գիտակրթական, ուսուցողական, կրոնական հարցերը, որոնք նրբորեն հյուսված են գիտության տարբեր ոլորտներին գիտակ, սուրբգրային գիտելիքների բացառիկ իմացությամբ աշխարհիկ հեղինակի բարդ գրվածքին: Այսպիսով՝ հետազոտության հիմնախնդիրը լուծելու համար անհրաժեշտ է ստեղծել Գրիգոր Մագիստրոսի գրական ժառանգության վերաբերյալ առկա գիտելիքին լրացնող նոր գիտելիք, որն իր ձևով, բովանդակությամբ, ինչպես նաև կիրառելիությամբ կլինի **գիտական նորույթ** և կարտացոլի մեր հետազոտական աշխատանքի **նորարարական հատկանիշը**:

## **ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

**Նպատակներն են՝**

ա) Գ. Մագիստրոսի բարդ ու «խորհրդավոր» գրվածքների լուսաբանումն ու վերաիմաստավորումը,

բ) Մագիստրոսի կիրառած աղբյուրների, ինչպես նաև դրանցից օգտվելու նրբությունների ու եղանակների բացահայտումը,

գ) Մագիստրոսի ստեղծագործական առանձնահատկությունների (լեզվական, կառուցվածքային, ժանրային հատկանիշներ, աշխատանեղանակ) վերհանումը,

դ) թղթերում արծարծված թեմաների և դրանց գրական առնչությունների վերաիմաստավորումը:

Առաջադրվել են հետևյալ **խնդիրները՝**

ա) ուսումնասիրել, ըստ որոշակի օրինաչափությունների՝ համակարգել ձեռագիր և տպագիր աղբյուրները, որոնք ամփոփում են Գ. Մագիստրոսի ստեղծագործությունները,

բ) պարզել, թե ամենահին ընթերցումներ ունեցող ձեռագիր ընդօրինակություններն ինչ միջավայրերի ծնունդ են,

գ) Մագիստրոսի խնդրո առարկա թղթերի՝ գիտական արժեք ներկայացնող ձեռագրերի տարընթերցումները համեմատել քննական բնագրերի հետ,

դ) քննել «Յաղագս կրօնաւօրի ումեմն, գոր Շապուհ անուանեն» թղթի իմաստային ընկալման առումով բարդ չափածո հատվածները, «Գանգիւն բախիւն» տողերով սկսվող «Ամ հեղգ աշակերտս յուսումն եւ հպարտս գոյ» թուղթը՝ քննական բնագրերին զուգահեռ շրջանառվելով բնագրերի դժվարին հատվածները մեկնաբանելու տեսակետից մի շարք արժեքավոր ձեռագիր այլ աղբյուրներ,

ե) բնագրային խնդիրներ լուծելու և ժանրային հարցերի հստակեցման նպատակով դիտարկել խնդրո առարկա ստեղծագործությունների կառուցվածքային և բովանդակային առանձնահատկությունները, համեմատել ձեռագիր աղբյուրներում դրանց խորագրային տարընթերցումները,

զ) աշխարհաբարի փոխադրել խնդրո առարկա գրաբարյան բնագրերը՝ անհրաժեշտ մեկնաբանություններով և աղբյուրների հիշատակությամբ,

է) վերլուծել թղթերը՝ մանրամասն անդրադառնալով դրանցում ամփոփված բազմաշերտ թեմաներին՝ միաժամանակ նորովի գնահատելով դրանց գրական արժեքը,

ը) բացահայտել Մագիստրոսի՝ ստեղծագործական որոշակի աշխատանեղանակ ընտրելու նպատակները,

թ) հստակեցնել Գրիգոր Մագիստրոսի ծավալուն չափածո ստեղծագործությանն («Հագարտողեան») առնչվող կարևորագույն հարցերից ժանրի խնդիրը,

ժ) քննել և համադրել Մագիստրոսի քերականական մեկնությանն առնչվող հիշատակարանային տեղեկությունները,

ժա) հիմնավորել, թե ինչով է պայմանավորված Մագիստրոսի քերականական դասագրքի ձեռագիր ընդօրինակությունների սակավությունը,

ժբ) պարզել, թե ուսումնագիտական ինչ միջավայրերում և որ վարդապետների ջանքերով է շրջանառվել մագիստրոսյան քերականությունը,

ժգ) արժևորել Մագիստրոսի ստեղծագործությունների գիտաճանաչողական, ուսումնական, ուսուցողական, գործնական նշանակությունները:

## **ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՎԱՐԿԱԾԸ**

Գ. Մագիստրոսի ստեղծագործական խնդիրներն առավել նուրբ են, երբ վերջինիս բնագրերն առնչվում են սուրբգրային բնագրերին՝ դրսևորվելով ժանրային նորովի լուծումների մեջ: «Հազարտողեանի» ժանրի հարցի քննությունը թույլ է տալիս առաջադրել հետևյալ վարկածը՝

«Հազարտողեան» երկը, որը, ավանդույթի ուժով, առանց ժանրային գնահատության մասնագիտական գրականության մեջ շրջանառվել է որպես պոեմ, միջնադարյան ըմբռնմամբ իր չափածո կառուցվածքով տաղ է՝ հազարտողյան ոտանավոր, որի ծավալուն լինելը պայմանավորված է արծարծված թեմայի ընտրությամբ՝ սուրբգրային հիմնական դրվագների և քաղվածքների անհրաժեշտ առատությամբ:

## **ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ և ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Գրիգոր Մագիստրոսի խնդրո առարկա ստեղծագործություններին առնչվող մի շարք գիտական հարցերի պարզաբանումն ու նորովի մեկնաբանությունները, որպես աղբյուր, կարող են լրացնել վերջինիս ստեղծագործության վերաբերյալ տեսական գրականությանը:

Սույն հետազոտության գործնական նշանակությունը նրանում է, որ վիաստարկված, համակողմանի վերլուծված արդյունքները գործնականում կարող են կիրառվել բուհերում՝ թե՛ բակալավրի կրթական ծրագրի և թե՛ մագիստրոսական դասընթացների շրջանակում: Բացի այդ՝ իր ընդգրկած հարցերի բազմաշերտությամբ առնչվելով կրոնական, պատմական, մանկավարժական մի շարք խնդիրների, հետազոտությունը կարող է օգտակար լինել նշված ոլորտներով զբաղվող մասնագետների համար:

## **ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ**

Հետազոտության իրականացման հիմքում ընկած են ինչպես ընդհանուր գիտական (*վերլուծություն, համադրում, վերացարկում, ինդուկցիա, դեդուկցիա*), այնպես էլ գրականագիտական (*պատմական, համեմատական, մեկնաբանական*) մեթոդներ:

## **ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԸՆՆՈՒԹՅՈՒՆԸ**

Թեկնածուական ատենախոսությունը հրապարակային պաշտպանության է հանձնարարվել Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի կողմից:

Բանասիրական ֆակուլտետի խորհրդի 2023 թ. մայիսի 5-ի նիստի որոշմամբ և երաշխավորությամբ տպագրվել է ատենախոսության վրա հիմնված «Գրիգոր Մագիստրոսի ստեղծագործությունները Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերում» մենագրությունը: Հետազոտության արդյունքները հրատարակվել են նաև ԲՈՆԿ-ի կողմից հաստատված պարբերականներում:



## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հետազոտությունը (144 համակարգչային էջ) բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից (235 միավոր):

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ** բովանդակում է հետազոտության մեթոդաբանական հիմքերը, նյութի մշակվածության աստիճանը, կիրառված մեթոդները, թեմայի օբյեկտի և առարկայի, արդիականության և գիտական նորությունի, նպատակների ու խնդիրների, տեսական և գործնական նշանակությունների, գիտական վարկածի ձևակերպումները:

**ԱՌԱՋԻՆ՝ «ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԳՐԱԿԱՆ ԲԱՐԳ ԼԵԶՎԻ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ. ՀԵՂԻՆԱԿԻ ԵՐԿԵՐԻ ԾՐՋԱՆԱԾՄԱՆ, ԺԱՆՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅԱՆ, ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐ»** գլուխը բաղկացած է հինգ ենթագլուխներից՝ *«Գրիգոր Մագիստրոսի երկերն ամփոփող ձեռագիր աղբյուրների քննությունը»*, *«Յաղագս կրանատրի ունենն, գրք Շապուհ անուանեն» թղթի չափածո միավորների քննությունը»*, *«Առ հեղգ աշակերտս յուսուն եւ հպարտս գոյ» թուղթը»*, *«Հազարտողենսնի» ժանրի հարցը»*, *«Գրիգոր Մագիստրոսի քերականական դասագրքի դերը Մյունխենում ուսումնագիտական կյանքում»*: Մագիստրոսի թղթերի՝ գիտական արժեք ներկայացնող ձեռագրերի, հիշատակարանային մեծարժեք տեղեկությունների միջոցով քննել ենք վերջինիս ստեղծագործությունների գործածությանն առնչվող ուշագրավ հարցեր՝

ա) ո՞ր վարդապետարաններում են կիրառվել հեղինակի երկերը,

բ) ո՞վքեր են շրջանառել նրա ստեղծագործությունները,

գ) տարբեր ժամանակներում Մագիստրոսի հատկապես ո՞ր ստեղծագործություններն են սիրված ու տարածված եղել,

դ) Մագիստրոսի ո՞ր ստեղծագործություններն են եղել ձեռագրական ընտրանի հավաքածուներ կազմողների ուշադրության կենտրոնում,

ե) ի՞նչ առանձնահատկություններ ունեն հեղինակի երկերի ընդօրինակություններն ամփոփող մատյանները,

զ) պահպանված ամենահին օրինակներն ու գրեթե ամբողջական ձեռագրերն ի՞նչ միջավայրերի ծնունդ են:

Մեզ են հասել Գ. Մագիստրոսի թղթերի ավելի քան 80 գրչագիր օրինակներ<sup>7</sup>, որոնց մեծագույն մասը պահպանվում է Երևանում, 19 օրինակ՝ Երուսաղեմում, 6 օրինակ՝ Վենետիկում, 4-ական օրինակներ՝ Վիեննայում, Չմամառում, հատուկենտ օրինակներ՝ Մյունխենում, Փարիզում, ինչպես նաև Ավետիս Մանջանի կազմած Միացյալ Նահանգների, Օքսֆորդի Բողեյան գրադարանի, Անթիլիասի Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության, Սեբաստիայի Ս. Նշանի վանքի ձեռագրական հավաքածուներում:

---

<sup>7</sup> Նկատի են առնվել ձեռագրերի համակարգում Գ. Մագիստրոսի թե՛ ամբողջական կամ գրեթե ամբողջական ստեղծագործություններ, թե՛ մեկ կամ մի քանի միավորներ, և թե՛ վերջինիս նամականիին չառնչվող, սակայն նրա անվան տակ ներկայացվող միավորներ (Կարապետին տաղ. . . . Չոքս են. . . ) ամփոփող մատյանները:

**Կառուցվածքային հետաքրքրություն են ներկայացնում այն մատյանները, որոնք բովանդակում են հեղինակի հնարավորինս ամբողջական ստեղծագործությունը՝** պարզ է նկատի չունենալով «Մեկնություն Քերականին», քանի որ այն Մագիստրոսի ժողովածուներին չի առնչվում<sup>8</sup>, ինչը, կարծում ենք, պայմանավորված է մեկնության գրչագրերի սակավությամբ, իսկ գրչագրերի սակավ լինելն էլ իր հերթին կապված է Դիոնիսիոս Թրակացու քերականական արվեստի՝ Գ. Մագիստրոսի մեկնության հիման վրա ստեղծված այլ հեղինակների մեկնությունների բազմաթիվ ընդօրինակությունների գոյությամբ:

Այդպիսիք են Մաշտոցի անվան Մատենադարանի (այսուհետ՝ ՄՄ) Հ<sup>մր</sup> 98, 1741, 3068, 4232, Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց մատենադարանի ձեռագրացուցակի (Եղմ) Հ<sup>մր</sup> 940, 3333, Սեբաստիայի Ս. Նշանի վանքի մատենադարանի (Սեբաստ. ) Հ<sup>մր</sup> 222, Չմմառի վանքի մատենադարանի (Չմմառ) Հ<sup>մր</sup> 661 ընդօրինակությունները, որոնք ներառում են հեղինակի «Հագարտողեանը», «Նորին Գրիգորի փիլիսոփայի Ներբողեան ի Սր. Խաչն Քրիստոսընկալ», «Նորին Յաղագս Խաչանշան գաւազանին գոր ընծայեաց տեսնն Պետրոսի Հայոց Կաթողիկոսի, ասացեալ զխորհուրդ Սր. Խաչին» չափածո երկերը և նամականին:

**Չեռագիր աղբյուրների համեմատական քննությունը ցույց է տալիս, որ տարբեր ժամանակներում առավել սիրված և գործածված են եղել Մագիստրոսի «Առ յեղգս յուսումն իմաստից... Գանազտական գեղանամ...», «Նորին Գրիգորի Առ հեղգ աշակերտս յուսումն եւ հպարտս գոյ... Գանգիւն բախիւն...», «Առ հեղգս ոմանս յաշակերտացն, որք ուսանէին զիմաստասիրութիւնս... Մրգուզ փանաք...», «Նորին Առ որդիս իւր գաւրանալ եւ ի պատերազմին հասանելոյ ի չարաբաստ ձերունոյն Նիկաւ-լայ... Լուար թէ եկն պապն Պաղայկ...» թղթերը:**

**Նախնական ընթերցումներին մոտ լինելու տեսանկյունից** հետաքրքրություն են ներկայացնում պահպանված ամենաինքն ընդօրինակությունները (ՄՄ Հ<sup>մր</sup> 1715, 1748<sup>9</sup>, Վիեննայի մատենադարանի (այսուհետ՝ Վիեն.) Հ<sup>մր</sup> 1299) գրչագրված 14-րդ և 15-րդ դարերին): Ցավոք, նշված օրինակների ստեղծման պատմությունները չեն պահպանվել, ուստի վերջիններիս ծննդյան միջավայրերին, գրչագրման գործընթացներին առնչվող հարցերը պարզաբանված չեն: Կարևոր է ընդգծել սակայն մեզ հայտնի Վիեն. Հ<sup>մր</sup> 1299 ձեռագրի («Ոսկեփողիկ-Հասարածոյ») հիշատակագրությունից արժեքավոր տեղեկություն այն մասին, որ մագիստրոսյան չորս թղթերը ներառող նշված մատյանի տերը աշխարհիկ մարդ էր՝ աստվածասեր, հավատարիմ խոջա Ֆարխաստին անունով<sup>10</sup>:

<sup>8</sup> Գրիգոր Մագիստրոս, Թուղթք եւ Չափաբերականք, Գրիգոր Մագիստրոսի եւ կիտանտի որսույ Վասակայ մարտիրոսի Մեկնություն Քերականին գոր եղեալ է գայոց եւ յիւրոց յաւելեալ յիմաստից, Մուրադյան Գ., Մատենագիրք Հայոց, ԺԱ դար, ԺԶ հատոր, Երեւան, ԵՊՀ հրատ., 2012, էջ 123:

<sup>9</sup> Նշված երկու օրինակները Գ. Մուրադյանի կազմած քննական բնագրի հիմք ձեռագրերից են:

<sup>10</sup> Ոսկեան Հ., Ցուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա, և. Բ, էջ 932:

Ձեռագրական տեղեկությունների առումով ուշագրավ են պոլյան միջավայրում ստեղծված Վենետիկի Մխիթարյանց մատենադարանի (Վնտկ) Հ<sup>մբ</sup> 1335 (1762), 1336 (1778), 1338, ՄՄ Հ<sup>մբ</sup> 3062 օրինակները: Առաջինի գրչության հիշատակարանից պարզ է դառնում, որ օրինակվել է «արագագիր քարտուղար» Ստեփանոսի և «բանասեր Գեորգ Կոստանդնուպոլսեցու համատեղ աշխատանքով, իսկ ըստ հետագայի հիշատակագրության՝ Հարություն արքեպիսկոպոս Բասենցին, որը Խոսալիայի Տրիեստ քաղաքից էր, 1790 թ. մատյանը նվիրել է Մխիթարյան հայերին<sup>11</sup>:

1778-ին ստեղծված Հ<sup>մբ</sup> 1336 մատյանն օրինակել է Հարություն անունով գրիչը: Ըստ տեղեկության՝ այն հիշատակ է Սաղաթել դպրապետի հիմնած Սամաթիայի դպրատանը՝ տեղի դաստիարակ Խաչատուր դպիրի հորդորմամբ («Ի Կոստանդնուպոլսոյ եհաս ի վանս 1827 Սեպտեմբերի 6») <sup>12</sup>: **Մագիստրոսյան թղթերն այսպիսով կիրառվել են Սամաթիայի դպրատանը:**

**Հատուկենտ բնագրեր պարունակող ձեռագրերը հատկանշական են պատվիրատու-ստացող վարդապետների կողմից Մագիստրոսի այս կամ այն երկի արժևորումն արտացոլելու տեսակետից:**

Գրիգոր Մագիստրոսի թղթերի ուսումնասիրության համակարգում կա մի կարևոր հանգամանք. վերջինիս գրական դիմագիծը յուրացնելու և ստեղծագործական առանձնահատկությունները վերհանելու տեսակետից սկզբունքորեն առանցքային են նրա բարդագույն գրվածքները<sup>13</sup> ընկալելն ու վերաիմաստավորելը՝ իրենց կառուցվածքային և լեզվական հատկանիշներով:

Գ. Մագիստրոսի՝ իմաստային ընկալման առումով խրթին չափածո երկու բնագրերի («Կէտ կարթիւ արտակիտիւ...», «Գանգիւն բախիւն...») բանասիրական քննության նպատակով Գ. Մուրադյանի կազմած քննական բնագրերին գուգահեռ շրջանառության մեջ ենք դրել արժեքավոր ձեռագրեր, որոնց տարբերությունները թույլ են տվել լուսաբանել խնդրո առարկա բնագրերի բովանդակությունը՝ ներկայացնելով դրանց աշխարհաբար փոխադրությունները՝ անհրաժեշտ հիմնավորումներով և աղբյուրների հիշատակությամբ, միաժամանակ անդրադարձել ենք բնագրերի գրական և ուսուցողական արժեքներին:

Ներկայացրել ենք մեր մոտեցումները «Հագարտողեանի» ժանրի խնդիրներին՝ փորձելով հստակեցնել ժանրային գնահատության հարցը:

«Մեկնութիւն Քերականիին» անդրադարձել ենք հետևյալ հարցերի տեսանկյունից՝ ա) ի՞նչ նպատակով Մագիստրոսը գրեց իր քերականական մեկնությունը, բ) ո՞րն էր վերջինիս ստեղծման եղանակի ընտրության շարժառիթը, գ) ո՞ր վարդապետներն են կիրառել այս դասագիրքը, դ) ո՞ր գիտակրթական միջավայրերում է շրջանառվել

---

<sup>11</sup>Ճեմնեմեան վրդ. Ս., Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Է, Ս. Ղազար, 1996, էջ 600:

<sup>12</sup>Նույն տեղում, էջ 601:

<sup>13</sup>Մ. Աբեղյանն, անդրադառնալով Մագիստրոսի բարդ գրվածքներին, ընդգծում է դրանց՝ շատերին անմատչելի լինելը. «Գրիգոր Մագիստրոսի լեզուն, առանձնապես Թղթերի և մի քանի չափածոների, իրավամբ համարվել է ընդհանրապես խրթին և շատերին անմատչելի» (Աբեղյան Մ., Երկեր, հ. Դ, էջ 45):

մագիստրոսական մեկնությունը, ե) ինչով էր պայմանավորված «Մեկնություն Քերականի» գրչագրերի սակավությունը

**ԵՐԿՐՈՐԿ՝ «ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԹՂԹԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՈՒՆԱԿԱՆ և ՀՅՅԱԿԱՆ ԴԻՑԱԲԱՆՈՒԹՅԱՆԸ, ՀՆԱԽՈՍՈՒԹՅԱՆՆ ՈՒ ԺՈՂՈՎՐԿԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՄՈՒԹՅԱՆԸ»** գլխում վերլուծաբար ներկայացրել ենք Մագիստրոսի՝ Թոռնիկ Մամիկոնյանին և Սյունյաց Հովհաննես արքեպիսկոպոսին ուղղված նամակների բովանդակությունը՝ հաղթահարելով մագիստրոսական գրաբարի առաջ բերած դժվարությունները: Քանի որ ուսումնասիրվող թղթերը չունեն աշխարհաբար թարգմանություն, դրանց բովանդակությունը թարգմանաբար ներկայացնելուց հետո միայն տվել ենք մեր անհրաժեշտ մեկնաբանություններն ու գնահատությունները՝ տողատակային ծանոթագրություններում շարադրելով նամակներում արծարծված թեմաներին առնչվող հարուստ գիտական նյութը, որը սնվում է Աստվածաշնչից, հայկական, հունական դիցաբանությունից, հնախոսությունից ու ժողովրդական բանասիրությունից: Թոռնիկ Մամիկոնյանին ուղղված նամակներում Մագիստրոսն իմաստասիրում է ծառերի, ձկների մասին: Նամակներից մեկում էլ նա քննության էր առել եկեղեցուն անմիջապես առնչվող հարցեր. թե՛ որն է մեր հավատի սկիզբն ու հիմքը, թե՛ ինչպես է այք շրջանում եկեղեցու հոյակերտ ճարտարապետությունը, և թե՛ **որքան է կենսական սեփական հողի վրա եկեղեցի ունենալու հանգամանքը, որը շատ նրբորեն միահյուսված է իշխանություն և պետություն ունենալու իրողության նկարագրությանը:**

Թղթերից մեկից իմանում ենք, որ Թոռնիկը «Ղեւոնեան ընդարձակագոյն տօմարի»<sup>14</sup> դավանողներից է, և այն մասին, որ ուրբաթ օրով ճաշակել է այնպիսի կերակուրներ<sup>15</sup>, որոնք պատրաստված էին թռչուններից, տեսակ-տեսակ գեղուններից, ինչպես օրինակ՝ սև խեցգետիններից, բազմոտանի սողուններից, կրիաներից և այլ բազում անշուք կենդանիներից:

Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանն իր «Հայոց եկեղեցին» գրքի «Քաղկեդոնի ժողովը» բաժնում խոսում է այն մասին, թե ինչպես Լևոնը, «խր ձեռնարկին աւելի ծանրակշռութիւն եւ զօրութիւն տալու համար, Մարկիանոս կայսրը համոզեց, նոր ընդհանուր ժողով մը գումարելու, որ հաւաքուեցաւ Քաղկեդոն քաղաքը (451) եւ ուր արտաքին եւ բռնադատական միջոցներով իբրեւ հաւատոյ կանոն ընդունել տուաւ իւր առ Փլաքիանոս գրած թուղթը, որ ծանոթ է **Տոմար Լեւոնի** անունով»<sup>16</sup> և ավելացնում է, որ գլխավոր նպատակը ոչ թե «պարզապէս աստուածաբանական վերացեալ կէտ մըն էր, Քրիստոսի բնութեանց տեսական խնդիրը, այլ բուն նպատակը՝ կատարելապէս

<sup>14</sup> Գրիգոր Մագիստրոս, Թուղթը եւ Չափաբերականք, Գրիգոր Մագիստրոսի եւ կիսաւանտի որդւոյ Վասակայ մարտիրոսի Մեկնություն Քերականին գոր եղեալ է գայլոց եւ յիւրոց յաւելեալ յիմաստից, էջ 253:

<sup>15</sup> Այս առիթով Մ. Աբեղյանը գրում է. «Թոռնիկ Մամիկոնյանն անցած է եղել հունադավանության, որ չէր արգելում պատ օրերը ձուկ ուտել» (տե՛ս Աբեղյան Մ., Երկեր, հ. Գ, Երևան, ՀՄՍՀ ԳԱ հրատ., 1970, էջ 44):

<sup>16</sup>Օրմանեան Մ., Հայոց եկեղեցին եւ իր պատմութիւնը, վարդապետութիւնը, վարչութիւնը, բարեկարգութիւնը, արարողութիւնը, գրականութիւնը, ու ներկայ կացութիւնը, Կոստանդնուպոլիս, տպագրութիւն Վ. Հ. Տէր-Ներսէսեանի, 1911, էջ 52-53:

գործնական և գերազանցապես թանձրացեալ կէտ մըն էր. այսինքն է հայրապետական աթոռներու փոխադարձ յարաբերութեանց եւ առաւելագոյն ազդեցութեան խնդիրը»<sup>17</sup>:

Ուշագրաւ է՝ նամակը տեղեկություն է հաղորդում այն մասին, որ **Թոռնիկ իշխանը եկեղեցու և հավատքի հարցերում ունեցել է Մագիստրոսից սկզբունքորեն տարբերվող դավանանք:**

«Առ իշխանն Մամիկոնեան, զոր խնդրէր իմաստասիրել յաղագս ձկանց եւ առաքելք նմա կարմրախայտ» (ՀԵ) թղթում կարդում ենք մարդու և ձկան կերպարանքով ահագին գազանի մասին, որի անունն էր «ովդակովն», ինչպես պատմում է Ապողոդորոսը<sup>18</sup> («Յիշեմ եւ որ յաւուրսն Դանաւոսի, այսինքն Յարեղի, չորիցն յուշկապարկացն ունել զնմանութիւն ձկանն: Եվ դարձեալ այլ ումեմն ձկան զմարդկան և զձկան ունել կերպարանս ահագին գազանի, որում անուն էր ովդակովն, որպէս պատմէ Ապողոդորոս»<sup>19</sup>):

«Առ նոյն Մամիկոնեան սակս ծառոյն զոր խնդրէր ի պետս սեղանոյ» (ՀԶ) թղթում հիշատակված ամենատարբեր ծառերը պաշտամունքի առարկա են եղել: Կիրրայում, գրում է Մագիստրոսը, որտեղ ավագները պատել էին անապատը, ծերացած կաղնին տապի ժամին հովանի էր լինում Արամագոյի ամենաբարձր գագաթին՝ շուրջը ծածկելով արևային տապից («Քանզի ծառն կաղնի պառաւելայն Կիրրայի, յոր աւագս պատուեալ յանապատին եւ զգերակատար գագաթանն Արամագոյայ ի տապ ժամու հովանաւորեալ, պարաճածկեր ի բեզեկեան տապոյն»<sup>20</sup>):

Ներկայացնում է Աթենայի միսրճած նիզակը Պիսիդոնի<sup>21</sup> եզրին, որը վերածվել է ձիթենու ճյուղի, և որը նվիրել են Օլիմպիական խաղերի հաղթողներին. («...Եւ զԱթենայն նիզակի առ եզր Պիսիդոնի ցցեալ, զոր ի տունկ ձիթենոյ յեղափոխիւր. զոր յՈլոմպիադան պատուիւր»)<sup>22</sup>:

Հիշատակում է Սաբալանի մայրին, որից պարթևները երեք քաղաքների ոստերն էին կերտել, իսկ արմատը վեմի էին փոխակերպել և Սպանդիարի արձանը կանգնեցրել: Ղ. Ալիշանն իր «Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց» աշխատության մեջ գրում է, որ այս Սպանդիարին չպիտի շփոթել Սպանդարապետի հետ. Սուրբ Գրքում Սպանդարապետի անվամբ կոչվում է Դիոնիսիոսը կամ հունական Բաքոսը, որը պաշտվում էր որպես այգիների և զինիների պաշտպան: Սպանդարապետը համարվում էր պահապան երկրի և կենդանիների և խնամող չորրորդ ամսվա (հունիս), բայց Հազկերտի

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 53:

<sup>18</sup> Մագիստրոսի հիշատակած ձկան և մարդու կերպարանք ունեցող «ովդակովն» գազանի մասին հիշված է Եվսեբիոս Կեսարացու գրքում (Եւսեբի Պամփիլեայ Կեսարացույ ժամանակականք երկմասնեայ, մասն Ա, Ժամանակագրութիւն պատմական, թարգմանեալ ի յատին բարբառ աշխատասիրութեամբ Հ. Մկրտիչ վարդապետի Մխիթարեան Ազգերեանց, էջ 13 / Գրիգոր Մագիստրոս, Թուղթք եւ Չափաբերականք, Գրիգոր Մագիստրոսի եւ կիտաւանտի որդոյ Վասակայ մարտիրոսի Մեկնութիւն Քերականին զոր եղեալ է զայլոց եւ յիւրոց յաւելեալ յիմաստից, էջ 245):

<sup>19</sup> Գրիգոր Մագիստրոս, Թուղթք եւ Չափաբերականք, Գրիգոր Մագիստրոսի եւ կիտաւանտի որդոյ Վասակայ մարտիրոսի Մեկնութիւն Քերականին զոր եղեալ է զայլոց եւ յիւրոց յաւելեալ յիմաստից, էջ 245:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 249:

<sup>21</sup> Խոսքը ծովի աստված Պոսեյդոնի մասին է:

<sup>22</sup> Գրիգոր Մագիստրոս, Թուղթք եւ Չափաբերականք, Գրիգոր Մագիստրոսի եւ կիտաւանտի որդոյ Վասակայ մարտիրոսի Մեկնութիւն Քերականին զոր եղեալ է զայլոց եւ յիւրոց յաւելեալ յիմաստից, էջ 249:

կողմից տոմարի փոփոխության արդյունքում՝ երկրորդ ամսվա (փետրվար): Այս Սպանդարամետ աստծուն պահլավները կոչում էին *Մաբանտունաս*: Պարսից Սպանդիարին, ըստ Մովսես Կաղանկատվացու, պաշտում էին նաև հոները, Թանկրի խան էին կոչում նրան և մեծամեծ սաղարթներով կաղնի ծառեր էին նվիրում և ձիեր գոհելով նրանց կաշին և գլուխը զցում էին այդ ծառերի ոստերի առաջ: Ալիշանն ընդգծում է, որ այս առասպելական քաջին իր թղթերում հիշում է Գրիգոր Մագիստրոսը: Մաբայան լեռը Ատրպատականում գտնվող *Մալպաան* է, որտեղ կար մեծ մայրի ծառ, և որի միջոցով էլ կանգնեցվել է Սպանդիարի արձանը<sup>23</sup>:

Մագիստրոսը գրում է նաև Ռոստոմյան տնկիի մասին, որի ոստերը կտրում էին, գործում էին նրանցից մանրագույն քնարներ, որոնք տալիս էին սկսնակների ձեռքը, նրանք մի որոշ ժամանակ սովորում էին, և ինչպես սարդենուց կտրած մահակով ռիթմ խփելիս պար գալով՝ երգում էին հոմերական քերթվածները («Բայց ասեմ գՌոստոմեանն տնկոյ, գորմէ ասեն յոստոցն հատեալ գործէին զնա մանրագոյն քնարս, զորս եղեալ ի ձեռքին համբակացն եւ առժամայն ուսեալք անաշխատաբար, որպէս ի սարդենի մահակէ պար գոյով երգէին զհոմերական քերթուածսն»<sup>24</sup>):

Հովհաննես արքեպիսկոպոսին ուղղված իմաստասիրական թղթերում Մագիստրոսն իմաստասիրում է ձկների, ծառերի, խնձորների, ձիերի մասին: Թղթերից մեկում կարդում ենք արամագոյան<sup>25</sup> կաղնու մասին, որը ձերանալով պտուղ չի տալիս, և որին ավագներ են պատել («Ոչ արմագդեանն կաղնին պառաւեալ տայր պտուղ, յորում աւագն պատուիր»<sup>26</sup>): Պտղաբեր չեն նաև տյուռենական<sup>27</sup> կաղնին, որը զտնվում էր Դիոնիսոսի<sup>28</sup> տաճարի մոտ, ինչպես նաև Օլիմպոսի երկնամուխ Ապոլլոնի ճեմարանի կաղնին, որի մի ճյուղից մի գիշերում կառուցվել է Կիզիկոն մայրաքաղաքը: Իսկ ծառի բունն ամբողջությամբ ծառայել էր ճյուղերին և ծովի այս ու այն կողմերն իրար կապելուն. այն Ապոլլոնի գորությանբ բերել էին Օլիմպոսից<sup>29</sup>:

---

<sup>23</sup> Տե՛ս Ալիշան Ղ., Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց, էջ 330-332:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 251:

<sup>25</sup> Չևսի կամ Արամագոյի ծառը՝ կաղնին, գտնվում էր Դոդոնա քաղաքում և որի սոսափյունով գուշակություններ էին անում: Փյունիկեցի նավավարները Արամագոյի տաճարի երկու քրմուհիներից մեկին վաճառեցին Դոդոնեի մոտ, քրմուհին այնտեղ մի կաղնի ծառի տակ փորքիկ կռատուն է կառուցում և Արամագոյին պաշտում (տե՛ս Համառոտ պատմությունք հին ազգաց, շարադրեց Ամբրոսիոս Գալֆայեան, Վենետիկ, ի վան Սրբոյն Ղազարու, 1849, էջ 263):

Ղևոնդ Ալիշանը, խոսելով ծառապաշտության մասին, ընդգծում է նաև հունական առասպելների պատգամախոս կաղնիներին, որոնց զխավորն էր «Եպիուռոս՝ Դոդոնի անտառ» (տե՛ս Ալիշան Ղ., Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց, էջ 76):

<sup>26</sup> Գրիգոր Մագիստրոս, Թուրթթ եւ Չափաբերականք, Գրիգոր Մագիստրոսի եւ կիսաւնտի որդւոյ Վասակայ մարտիրոսի Մեկնութիւն Թերականին գոր եղեալ է գայոց եւ յուրոց յաւելեալ յիմաստից, էջ 364:

<sup>27</sup> Իտալիայում ապրած հին ժողովրդի՝ էտրուսկների կամ էտրուսկական ծառ:

<sup>28</sup> Ըստ հունական դիցաբանության՝ Դիոնիսոսը, որը ամպրոպային Չևսի և Թերեի արքա Կադմոսի դուստր Սեմելեի որդին էր, խաղողագործության և գինու աստվածն էր, համապատասխանում էր հռոմեական Բաքոսին: Նրա տոնախմբությունները կարևոր էին, որովհետև դրանցից սկիզբ առան թատերական ներկայացումները (տե՛ս Կուն Ն., նշվ. աշխ., էջ 81):

<sup>29</sup> Ըստ հունական դիցաբանության՝ երբ Ապոլլոնը մուսաների ուղեկցությամբ երևում էր լուսավոր Օլիմպոսում, և բազում աստվածների մեջ հնչում էր նրա քնարի ձայնն ու մուսաների երգեցողությունը, ամեն ինչ պապանձվում էր այնտեղ (տե՛ս նույն տեղում, էջ 39):

Նամակներից մեկում էլ Մագիստրոն իմաստասիրում է «ղեկիական»<sup>30</sup> խնձորի մասին, որին մեկը նայում էր ինչպես գեղմին («...եւ այլ ուրեմն խնձորս սրբընչանս անդամարեկս խաղուցն հայել ի գեղմն, իբրու եւ գղկիականն խնձոր»<sup>31</sup>): **Մագիստրոսն այստեղ նկատի ունի հունական դիցաբանության ոսկե գեղմը**<sup>32</sup>, այսինքն՝ բնագրի նշված հատվածում **խնձորն ընկալվում է որպես արժեքավոր և պատվելի պտուղ**:

Ուսումնասիրվել են նաև Մագիստրոսի նամականիում տեղ գտած առակները: Արդյունքներն ամփոփված են «**Առակներ Գրիգոր Մագիստրոսի թղթերում**» ենթազգլխում: Առակները ներկայացնելիս Մագիստրոսը կա՛մ վկայակոչում է աղբյուրը, կա՛մ ավելի հաճախ չի ներկայացնում՝ թողնելով ընթերցողի հետևությունը, և կա՛մ ընդգծում է, որ դրանք «ի գոեհիկս» են պատմված, այսինքն՝ ռասմիկների, ժողովրդի կողմից են պատմված: Բացի այդ՝ Մագիստրոսը նույնությամբ չի կրկնում հունական դիցաբանական պյուժեները: Նա փոփոխում է անունները կամ ինչ-ինչ դրվագներ, ավելացնում կամ պակասեցնում որոշ հատվածներ, այսինքն՝ մենք հանդիպում ենք արդեն հայտնի առակների կամ դիցաբանական պյուժեների մագիստրոսյան տարբերակներին:

**ԵՐՐՈՐԿ՝ «ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ՝ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԹՂԹԵՐԸ» ԳԼԽՈՒՄ** անդադարձել ենք հեղինակի՝ Պետրոս կաթողիկոսին, Գագիկ արքային, Սարգիս վարդապետին ուղղված պատմաքաղաքական հարցեր ամփոփող թղթերին: Ներկայացրել ենք Անիի պետականության կորստի պատճառներն՝ ըստ Գրիգոր Մագիստրոսի:

Թղթերի բովանդակությունից պարզ է դառնում, թե ինչ փոխհարաբերություններ ուներ Պահլավունի իշխանը Պետրոս կաթողիկոսի, Գագիկ Երկրորդի, Սարգիս վարդապետի հետ, միաժամանակ ընդգծվում է Բագրատունիների պետականության պահպանմանն ուղղված նրա գործունեությունը: Հատկանշական է, որ վերջիններիս հետ Պահլավունի իշխանն անկեղծորեն խոսում է իր հանդեպ անարդար քաղաքական գնահատականների և դրանց պատճառած մեծ մտահոգությունների մասին:

Մագիստրոսը Գագիկ Երկրորդին ուղղված երկու թուղթ ունի՝ «Առ որդին Աշտի պատասխանի, մինչ զհաւրէն իւր գրէր բանս կեղերջականս» (ՀԲ), «Պատասխանի թղթոյն Գագկայ որդւոյն Աշտոյ, եկեալ վասն ոչինչ իրաց վայրապար զկնի կրանաւորաց սակս

---

<sup>30</sup> «Գեկիական խնձոր» ասելով՝ Մագիստրոսը նկատի ունի Հին Հունաստանի Դեյֆի քաղաքի խնձոր: Հայտնի է «ղեկիական պատգամախոս» արտահայտությունը, որը նշանակում է Ապոլլոնի տաճարում սրբազան եռոտանուն նստած գուշակություններ անող, իսկ քրմերն էլ մեկնաբանում էին այդ գուշակությունները (տե՛ս ՆԲՀԼ, հ. 1, էջ 607): Երբ Չևսի որդի Ապոլլոնը հաղթում է իր մորը չարիք պատճառած Պիթոնին, նրա մարմինը թաղում է սրբազան Դեյֆիում, և հենց ինքն էլ այնտեղ հիմնադրում սրբավայր ու գուշակավայր՝ Չևսի կամքը մարդկանց կանխագուշակելու համար (տե՛ս Կուն Ն., նշվ. աշխ., էջ 35):

<sup>31</sup> Գրիգոր Մագիստրոս, Թուղթը եւ Չափաբերականք, Գրիգոր Մագիստրոսի եւ կիտանոսի որդւոյ Վասակայ մարտիրոսի Մեկնութիւն Քերականին գոր եղեալ է գայլոց եւ յիւրոց յաւելեալ յիմաստից, էջ 365:

<sup>32</sup> Ոսկե գեղմի մասին հունական առասպելաբանությունը տե՛ս Կուն Ն., նշվ. աշխ., էջ 280-281, 307-308: Հիշյալ առասպելից բացի՝ «Ավանդության համաձայն, Կովկասում ոսկի հայթայթել են ոչխարի մորթին ընկղմելով ոսկեբեր գետի ջրերում, ոսկու մասնիկներն իր վրա հավաքած գեղմն ունեցել է մեծ արժեք» (տե՛ս Հայկական տոմկետական հանրագիտարան, հ. 8, Երևան, ՀՍՍՀ Միենիստրների տվետի հրատ., 1982, էջ 627): Ինչպես նկատեցինք, կովկասյան և հունական հնախոսության մեջ կան ընդհանրություններ:

պարտուց ինչ նոցա ի գաւառէն Տարաւոյ» (ՀԳ): Դրանք ամբողջական պատկերացում են տալիս Պահլավունի իշխանի և արքայի բարդ և անառողջ փոխհարաբերությունների մասին: Մագիստրոսն իր մտահոգությունն է հայտնում այն հարցի շուրջ, թե իր նկատմամբ հալածանքների ալիքը իրատեսական հիմքեր չունի, և խոհեմ արքան չէր կարող չըմբռնել այդպիսի առերևույթ մեղադրանքների անարդարացիությունն ու չար միտումները: Այնուամենայնիվ, տարակուսանքով, կեղծիքով և անօրեն խորհուրդներով չպիտի կաշկանդել սեփական միտքը. այսպիսի դիտողությունն ուղղված էր հենց Գագիկ արքային, և այս հիմնական գաղափարի շուրջ է տարածվում ՀԲ թղթի բովանդակությունը: Նամակից պարզ է դառնում, որ Գագիկ արքան սպառնացել է անիծել իրեն: Մագիստրոսը գրում է, որ ինքը ոչ մի գաղտնի նենգություն գիտակ չէ: Աստվածաշնչյան օրինակով ընդգծում, որ Տերը ճանաչում է իր ճանապարհները և գիտի իր սրտի գաղտնիքները («Տէր է ճանաչող ճանապարհաց իմոց, նա գիտէ զգաղտնիս սրտի իմոյ»<sup>33</sup>) և արքայի անիծելու սպառնալիքին կարող է միայն նրա համար աղոթելով արձագանքել. «Դու սպառնաս անիծանել, այլ ես աղաւթել ի վերայ քո, զորս ոչ երբէք սխալցի եւ ոչ սխալեմ...»<sup>34</sup>: Ապա՝ ավելացնում, որ եթե իրեն խռովարար է կարծում, թող տիրոջ առջգ ասի, որովհետև ինքն անմեղ է. «...զիս'րդ ճանաչես զիս՝ հալածելոցն հաւաքի՜ չ կամ խռովութեան շիջուցի՜, եթէ ընդ խազմարարս խռովիչ, ասա՛ առաջի Տեառն»<sup>35</sup>:

Մագիստրոսը Սարգիս վարդապետին բացատրում է, որ իր թշնամիների անտեղի հալածանքները վիշտ են պատճառում իրեն, և ինքը մեղմում է այդ վշտի մեծությունը աստվածային խոսքի միջոցով, որը «դիւրացուցանաւդ» և «գաւրացուցանաւդ» է նրա համար, ինչպես ջուրը՝ անապատ հողի կամ «որպէս եղջերու, զի փափագէ յաղբերս ջուրց»<sup>36</sup>:

Ոչ միայն պատմական իրադարձությունների, այլև գրական ժանրի տեսակետից խիստ ուշագրավ է Մագիստրոսի՝ Սարգիս վարդապետին ուղղված «Պատասխանի Սարգիս վարդապետի եւ ողբս ի վերայ Արամեան նահանգի» (ԺԹ) թուղթը: Նրանում կան հաստատվածներ, որոնք ողբի ժանրի յուրահատուկ դրսևորումներ են: Պահլավունի իշխանի *ողբը* ծնունդ է առնում հիացման արժանի անցյալի և իր ժամանակի այն դառն կենցաղի հակադրությունից, որում, ինչպես ինքն է ասում, անկենցաղների պես են ապրում. «Բանգի զի՛նչ աւգուտ մեզ երկարութիւն ամաց, եւ մեծագոյն բարկութիւնս եւ գտառապանս կրել եւ տեսանել եւ ի վերայ յորունց առնուլ ողբս եւ գնոցայն ցաւակցել: Վասն զի իմ է բոլորիցն բեկումն...»<sup>37</sup>:

Պատմական բովանդակություն ունեցող նամակների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Գ. Մագիստրոսի կարծիքով Բագրատունիների պետականության կորուստը Գագիկ Երկրորդի յուրաքանչյուրության ու անփորձ լինելու պատճառով էր, միաժամանակ Վեստ Սարգսի ու նրան համակիր նախարարների՝ կենտրոնաձիգ պետությանը

---

<sup>33</sup> Գրիգոր Մագիստրոս, Թուղթք եւ Չափաբերականք, Գրիգոր Մագիստրոսի եւ կիսամտի որդու Վասակայ մարտիրոսի Մեկնութիւն Զերականին գոր եղեալ է գայոց եւ յիւրոց յաւելեալ յիմաստից, էջ, 213:

<sup>34</sup> Նույն տեղում:

<sup>35</sup> Նույն տեղում:

<sup>36</sup> Նույն տեղում (սուրբգրային աղերսների մասին տե՛ս տողատակում):

<sup>37</sup> Նույն տեղում:



չենթարկվելու և դավաճանության դիմելու արատավոր վարքագծի հետևանքը, որը վերջինիս համար դարձել էր մեծագույն մտահոգության և ազգային վշտի պատճառ:

Պատմական խնդիրներ արժարժող թղթերում պարզորոշ ներկայանում են Մագիստրոսի փոխհարաբերությունները Պետրոս կաթողիկոսի, Սարգիս վարդապետի և Գազիկ արքայի հետ: Հատկանշական է, որ վերջիններիս հետ Պահլավունի իշխանն անկեղծորեն խոսում է իր հանդեպ անարդար քաղաքական գնահատականների և դրանց պատճառած մեծ մտահոգությունների մասին:

## **ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Հետազոտության արդյունքներն ամփոփված են հետևյալ ընդհանրական եզրահանգումներում՝

1. Մագիստրոսի ստեղծագործությունների գրչագրերի պահպանված ամենախին օրինակները ներկայացնում են վերջինիս գրական ժառանգությունից մեկ-երկու օրինակ (հիմնականում չափածո) և պատկանում են 13-15-րդ դարերին: Ձեռագիր այդ օրինակները ներկայացնում են Հերմոնի վանքի, Գյաձորի, Սեբաստիայի Գրո անապատի միջավայրերը, մի մասի ստեղծման վայրերն անհայտ են: «Չափաբերականք» ներկայացնող ժողովածուներից մեկն էլ 16-րդ դարի ընդօրինակություն է, ստեղծվել է Կարինում, պահվում է Մաշտոցյան Մատենադարանում: Առավել ամբողջական ձեռագրերը 17-րդ դարի օրինակներ են, որոնք գործածվել են Պոլսում, Հովհաննավանքում, Սեբաստիայի Ս. Նշանի վանքում: 18-19-րդ դարերի ընդօրինակությունները փաստում են նոր ժամանակներում Մագիստրոսի գրական ժառանգության շուրջ շարունակվող հետաքրքրությունը տարբեր միջավայրերում (Կ. Պոլիս, Սամաթիա, Կեսարիա, Թեուդուպոլիս, Փարիզ, Տիբլիս, Վիեննա, Չմնառ, Համիթ, Իլով, Այրակունիս, Ադրիանապոլիս):

2. Գրիգոր Մագիստրոսի «Յաղագս կրանաւորի ումեան, գոր Շապուհ անուանեն» թղթի չափածո «առեղծվածային» հատվածների բանասիրական քննությունը բացահայտում է վերջիններիս՝ սուրբգրային բնագրին և կրոնական խնդիրներին առնչությունները: Հետազոտության արդյունքում պարզվում է՝ բնագրի յուրացման բանալին Հոբի գիրքն է: Աստվածաբանական խնդիրների համատեքստում անգամ Մագիստրոսն առաջադրում է ուսուցողական նպատակներ: Չափածո մյուս խրթին բնագրի («Առ հեղզ աշակերտս յուսումն եւ հպարտս գոյ») քննության արդյունքում արտացոլվում են Մագիստրոսի ուսումնական պահանջներն ու Հոմերոսի նկատմամբ հիացումը:

3. Հետազոտելով Մագիստրոսի ծավալուն չափածո ստեղծագործության՝ «Հազարտողեանի» ժանրի խնդիրը՝ առաջ ենք քաշել և հիմնավորել այն վարկածը, որ արաբական տաղաչափությամբ գրված միջնադարյան ըմբռնմամբ իր չափածո կառուցվածքով տաղ ընկալվող այս ստեղծագործությունը հազարտողյան ոտանավոր է, որի ծավալուն լինելը պայմանավորված է արժարժված թեմայի ընտրությամբ՝ սուրբգրային հիմնական դրվագների և քաղվածքների նպատակային առատությամբ: Իսկ շուրջ 22 ձեռագիր մատյաններում (պահպանված ամենախին գրչագիրը ստեղծվել է 16-րդ դարում Կարինում, պահվում է ՄՄ-ում) եղած ընդօրինակումները փաստում են՝ այն սիրված է եղել

և տարածում ունեցել: Հազարտոռոյան այս ոտանավորում Մագիստրոսը նրբորեն միավորել է ազգայինն ու կրոնականը:

4. Գրիգոր Մագիստրոսի քերականական դասագրքի՝ որպէս սկզբնաղբյուրային եզակի օրինակի հետազոտության արդյունքում պարզ է դառնում, որ վերջինիս մեկնության եղանակի ընտրությունը, ինչը նրանում ներառված մեկնությունները չմիավորելու տեսակետից բանասիրության մեջ ընկալվել է որպէս հեղինակի մեթոդական մտածողության արդյունք, որով նա զիջել է հետագա մեկնիչներին, իրականում պայմանավորված էր քերականության ստեղծման նրա նպատակներով: Քերականների՝ չմիավորված մեկնությունների հաջորդաբար ներկայացման սկզբունքը թույլ կտար հնարավորինս շրջանառել վերջիններիս նախնական բնագրերին մոտ օրինակները: Մինևոյն ժամանակ, հեղինակն իր վերլուծությունները ներկայացրել է վերջում, որպէսզի չխախտի Մեկնության մեջ ներառված բնագրերի ամբողջականությունը, մյուս կողմից է՝ սեփական հավելումների բովանդակությունը ընդգծում է Մագիստրոսի քերականական գիտելիքների բազմազանությունը: Հետազոտությունը փաստում է՝ եթէ չլիներ Մագիստրոսի այսօրինակ մեկնությունը, դժվար կլիներ պատկերացում կազմել Մեկնության հետագա բնագրերի ստեղծման օրինաչափությունների մասին:

ՄՄ Հ<sup>տր</sup> 3917 ձեռագրի հետագայի հիշատակարանի քննության արդյունքում հատկանշվում է գիտաճանաչողական և ուսումնական դերը, որն ունեցել է Մագիստրոսի քերականական դասագիրքը Սյունյաց վարդապետների գնահատությամբ: 15-րդ դարում, երբ արդեն ստեղծվել էին Հովհ. Երզնկացու, Հովհ. Ծործորեցու, Վարդան Արևելցու մեկնությունները, Տաթևացի մեծ վարդապետն իր աշակերտ Հովհաննես Կարմիր վարդապետին Սարկավագանց վանքի համար տալիս է Մագիստրոսի քերականության բնագիրը, սա ցույց է տալիս, որ նա խորապէս գնահատել է Մագիստրոսի քերականական երկի անփոխարինելի արժեքը թե՛ գիտական, և թե՛ մանկավարժական տեսանկյունից: Նշված քերականական գիրքը կիրառվել է Տաթևի ուսումնագիտական կյանքում. Շմավոն վարդապետի ջանքերով Հովհաննես վարդապետին տրված մատյանը վերադարձվել է Տաթևի վանք: Այսպիսով՝ հետազոտության արդյունքում իմանում ենք նաև, թե ինչ ուղի է անցել Մագիստրոսի քերականությունն ամփոփող ՄՄ Հ<sup>տր</sup> 3917 ձեռագիր ընդօրինակությունը (Տաթևի վանք-Սարկավագանց վանք-Տաթևի վանք-Էջմիածնի մատենադարան-Մաշտոցի անվան Մատենադարան):

5. Վերլուծաբար ներկայացնելով Թոռնիկ Մամիկոնյանին ուղղված չորս նամակները, նորովի և առավել լիակատար մոտենալով նրանցում արծարծված թեմաների համակարգին՝ եկել ենք այն հետևության, որ ձկների, ծառերի մասին առասպելական պատմություններով, եկեղեցու հոյակապ կերտվածքի նկարագրություններով հարուստ թղթերն աչքի են ընկնում աղբյուրների զանազանությամբ և խոսում են հին աշխարհի պաշտամանունքային առարկաների վերաբերյալ Գ. Մագիստրոսի հետաքրքրության, երևակայության և խորը գիտելիքների մասին, որոնք սնվում են Աստվածաշնչից և հունական դիցաբանությունից:

Սյունյաց Հովհաննես արքեպիսկոպոսին ուղղված իմաստասիրական թղթերի ուսումնասիրության արդյունքում մի կողմից լուծվում է Մագիստրոսի բարդ գրական լեզվով պայմանավորված դժվարությունների հարցը, մյուս կողմից վեր հանվում նրանցում արծարծված թեմաները, որոնք Աստվածաշնչին, հայկական և հունական հնախոսությանն առնչվող մեծաքանակ գիտելիք են ամփոփում:

6. Գրիգոր Մագիստրոսի թղթերում ամփոփված առակները՝ որպես գրական այդ տեսակների առաջին նմուշներ, կա՛մ հայտնի առակների մագիստրոսյան տարբերակներ են, կա՛մ հեղինակը վերցրել է ժողովրդական բանահյուսությունից: Մի մասն էլ եթե Մագիստրոսն ինքը չի հորինել, ապա նմուշներ են, որոնց սկզբնագրերը չեն պահպանվել, կամ իրենց հիմքում ունեն բանավոր գիտելիքներ:

7. Պատմական բովանդակությամբ թղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ըստ Գրիգոր Մագիստրոսի՝ Անիի պետականության կործանման պատճառը Գագիկ Երկրորդի անփորձ լինելն էր, Վեստ Սարգսի՝ կենտրոնաձիգ պետությանը չենթարկվելու հանգամանքը: Չնայած Վեստ Սարգսի բացահայտ դավադիր քայլերին, Գագիկ արքան շարունակում էր վստահել նրան՝ այդպիսով բռնելով կործանման ուղին և փոխարենը հալածական վերաբերմունք էր դրսևորում Պահլավունի իշխանի նկատմամբ, ով, Վեստ Սարգսի դեմ դուրս գալով, կանխել էր վերջինիս կողմից հայոց գահին տիրանալը՝ թագավորեցնելով Գագիկ Երկրորդին: Միաժամանակ թղթերում ներկայանում են մագիստրոսյան հուսահատ մտորումները, ներքին ապրումներն իր հանդեպ եղած անարդար վերաբերմունքի համար, որի մասին նա անկեղծորեն հայտնում է Գագիկ արքային: Բնագրերին հարագատ են աստվածաշնչյան նյութերը:

Այսպիսով՝ ձեռագիր մատյանների բնագրային միավորների, հրատարակված քննական բնագրերի, պահպանված գրչության ժամանակի և հետագայի հիշատակարանների<sup>38</sup> քննության արդյունքում լուծել ենք բնագրային, կառուցվածքային կարևոր խնդիրներ, ինչպես նաև Մագիստրոսի ստեղծագործությունների գործածությանն առնչվող ուշագրավ հարցեր:

**Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.**

1. Գրիգոր Մագիստրոսի «Առ հեղգ աշակերտս յուսումն եւ հպարտս գոյ» թուղթը, «Հայագիտական հանդես», 4 (42), Երևան, 2018, էջ 110-119:
2. Գրիգոր Մագիստրոսի թղթերը Բագրատունիների հայոց թագավորության մասին, «Գիտական Արցախ», 2 (3), Երևան, 2019, էջ 355-367:
3. Գրիգոր Մագիստրոսի՝ Թոռնիկ Մամիկոնյանին ուղղված նամակների մասին, «Հայագիտական հանդես», 3 (48), Երևան, 2020, էջ 84-98:
4. Առակներ Գրիգոր Մագիստրոսի թղթերում, «Հայագիտական հանդես», 1 (46), Երևան, 2020, էջ 64-76:
5. Գրիգոր Մագիստրոսի «Հազարտողեանի» ժանրի հարցը, «Պատմություն և քաղաքականություն», 1 (12), Երևան, 2021, էջ 27-38:
6. Գրիգոր Մագիստրոսի՝ Մյունխաց Հովհաննես արքեպիսկոպոսին ուղղված իմաստասիրական նամակները, «Հայագիտական հանդես», 2 (51), Երևան, 2021, էջ 105-118:

---

<sup>38</sup> Չեռագրերի մասին անհրաժեշտ տեղեկությունները հիմնականում քաղել ենք մինչ այժմ լույս տեսած ՄՄ Մայր ցուցակի, ինչպես նաև Վենետիկի, Երուսաղեմի, Վիեննայի, Սերապտիայի, Փարիզի, Մյունխենի, Չմմառի և մի շարք այլ հաստրների ձեռագրերի նկարագրություններից:

7. Գրիգոր Մազիստրոսի «Յաղագս կրանաւորի ումեմն, զոր Շապուհ անուանեն» թուղթը, «Հայագիտական հանդես», 3-4 (57-58), Երևան, 2022, էջ 118-132:
8. Գրիգոր Մազիստրոսի քերականական դասագրքի դերը Սյունյաց դպրոցում, «Պատմաբանասիրական հանդես», 3 (224), Երևան, 2023, էջ 180-187:
9. Գրիգոր Մազիստրոսի ստեղծագործությունները Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերում, մենագրություն, Երևան, Արմավ հրատ., 2024 196 էջ:

## ОВСЕПЯН АСМИК ГАГИКОВНА

### ПРОИЗВЕДЕНИЯ ГРИГОРА МАГИСТРОСА В РУКОПИСЯХ МАТЕНАДАРАНА ИМЕНИ МАШТОЦА

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10. 01. 01 – “Средневековая и новая армянская литература”.

Защита диссертации состоится 31 мая 2024 года, в 12:30 часов на заседании специализированного совета высшей аттестационной комиссии 003 по специальности «Литературоведение», действующего при Институте литературы имени М. Абегяна НАН РА.

Адрес: 0015, Ереван, ул. Григора Лусаворича 15.

С диссертацией можно ознакомиться в библиотеке Института литературы имени М. Абегяна.

#### РЕЗЮМЕ

##### **Объект и предмет исследования.**

**Объектом** настоящего исследования являются хранящиеся в Матенадаране имени Маштоца богатые фактами и представляющие научную ценность рукописные копии произведений Григора Магистроса, которые откроют новые пути восприятия развернутых автором тем; **предметом** являются произведения, вызывающие трудности в контексте содержательных и структурных вопросов и требующие научных обоснований.

##### **Актуальность и научная новизна исследования.**

Предмет настоящего исследования отражает основную **проблему** выбранной темы. **Актуальность** темы обусловлена тем, что рассматриваемые произведения либо не становились материалом научных анализов, либо имеют противоречивые оценки, либо предшествующее знание о них недостаточно для освещения заложенных в основе содержания произведения научно-образовательных, обучающих, религиозных вопросов, которые тонко вплетены в сложный текст светского автора, сведущего в различных областях науки, обладающего исключительным знанием Священного Писания. Таким образом, для решения проблемы исследования необходимо в дополнение к уже имеющемуся знанию о Григоре Магистросе создать новое, которое по своей форме, содержанию, а также прикладному значению будет представлять собой **научную новизну** и отразит **новаторский характер** нашей исследовательской работы.

##### **Цели и задачи исследования**

###### **Цели:**

- а) освещение и переосмысление сложных и загадочных текстов Г. Магистроса,
- б) выявление использованных Магистросом источников, а также раскрытие нюансов и способов их использования,
- в) раскрытие творческих особенностей Магистроса (языковые, структурные, жанровые характеристики, метод работы),
- г) переосмысление развернутых в письмах Магистроса тем и их литературных связей.

###### **Задачи:**

- а) изучить, систематизировать, согласно определенным закономерностям, рукописные и печатные источники, которые содержат произведения Г. Магистроса,
- б) выяснить, в какой среде родились рукописные копии, имеющие самые древние прочтения,

в) сравнить разночтения имеющих научную ценность рукописей исследуемых писем Магистроса с рассматриваемыми оригиналами,

г) исследовать сложный с точки зрения смыслового восприятия стихотворный отрывок письма “Послание Григора Магистроса-Некому монаху по имени Шапух”, начинающуюся строками «Գաւրգիւն ընդհին» письму “ Для учеников, ленивых в учении, и всех высокомерных” - параллельно с рассматриваемыми оригиналами используя ряд других источников, ценных с точки зрения толкования трудных отрывков оригиналов,

д) с целью решения проблем, связанных с оригиналами, и прояснения жанровых вопросов рассмотреть структурные и содержательные особенности исследуемых произведений, сравнить разночтения их заглавий в рукописных источниках.

е) перевести с древнеармянского на новоармянский язык исследуемые оригиналы, с необходимыми комментариями и упоминанием источников,

ё) проанализировать письма Магистроса, подробно касаясь содержащихся в них многослойных тем, одновременно по-новому оценивая их литературную ценность,

ж) раскрыть цели, преследуемые Магистросом при избрании определенного творческого метода работы,

з) прояснить один из важнейших вопросов, связанных с объемным стихотворным произведением Григора Магистроса («Тысячестрочник») – вопрос жанра,

и) рассмотреть и сравнить дневниковые сведения, связанные с грамматическим толкованием Магистроса,

иа) обосновать, чем обусловлена малочисленность рукописных копий учебника грамматики Магистроса,

иб) выяснить, в какой научно-образовательной среде и усилиями каких архимандритов использовалась магистросовская грамматика,

ив) оценить научно-познавательное, учебное, практическое значение произведений Магистроса.

#### **Научная гипотеза исследования.**

Творческие задачи Г. Магистроса наиболее деликатны, когда его тексты касаются оригиналов Священного Писания, проявляясь в новых жанровых решениях. Изучение вопроса жанра «Тысячестрочника» позволяет выдвинуть следующую гипотезу: сочинение «Тысячестрочник», которое, в силу традиции, без определения жанра, в специальной литературе обозначалось как поэма, в средневековом восприятии, по своему поэтическому строению является тысячестрочным стихом, большой объем которого обусловлен выбором темы – необходимым обилием изложений основных событий Священного Писания и отрывков из него.

#### **Теоретическое и практическое значение исследования.**

Прояснение и новое толкование ряда научных вопросов, связанных с рассматриваемыми произведениями Григора Магистроса, как источник могут дополнить теоретическую литературу, касающуюся его творчества.

Практическое значение настоящей работы заключается в том, что обоснованные, всесторонне проанализированные источники могут на практике применяться в вузах – в рамках учебных программ как бакалавриата, так и магистратуры. Кроме того, работа, многослойностью охваченных вопросов касаясь ряда религиозных, исторических, педагогических проблем, может быть полезна для специалистов в указанных областях.

#### **Методы исследования.**

В основе исследования лежат как общенаучные (*анализ, сопоставление, абстрагирование, индукция, дедукция*), так и литературоведческие (*исторический, сравнительный, толковательный*) методы.

### **Экспертная оценка работы.**

Кандидатская диссертация принята к публичной защите кафедрой древней и средневековой армянской литературы и методики ее преподавания АГПУ им. Х. Абовяна. По решению и одобрению ученого совета филологического факультета от 5 мая 2023 г. напечатана основанная на диссертации книга «Произведения Григора Магистроса в рукописях Матенадарана имени Маштоца». Результаты исследования (8 статей) опубликованы также в журналах, признанных ВАК.

### **Структура исследования**

Работа состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы (235 единиц).

Во **введении** представлены методологические основы работы, степень обработанности материала, использованные методы, сформулированы объект и предмет темы, ее актуальность и научная новизна, цели и задачи, теоретическое и практическое значение, научная гипотеза.

В первой главе - **«Филологический анализ сложного литературного языка Григора Магистроса: вопросы использования сочинений автора, жанровой оценки, выбора творческого метода»** - с целью филологического исследования двух сложных с точки зрения смыслового восприятия стихотворных оригиналов («Կէտ Կարթի արևալիւնի...», «Գնդգին րալիւն...») нами использованы ценные рукописи, различения которых позволили прояснить содержание рассматриваемых оригиналов, представив их перевод на новоармянский язык, с необходимой аргументацией и указанием источников, одновременно обращено внимание на литературную и образовательную ценность оригиналов. Мы представили наши подходы к проблеме жанра «Тысячестрочника», сделав попытку прояснить вопрос жанровой оценки. К «Толкованию Грамматики» мы обратились с точки зрения следующих вопросов: а) с какой целью Магистрос написал свое грамматическое толкование, б) почему был избран такой метод ее создания, в) какие архимандриты использовали этот учебник, г) в какой научно-образовательной среде использовалась магистросовская грамматика, д) чем была обусловлена малочисленность рукописей «Толкования Грамматики».

Во второй главе - **«Связи писем Григора Магистроса с греческой и армянской мифологией, археологией и фольклором»** - мы представили содержание писем Магистроса к Торнику Мамиконяну и сиюникскому архиепископу Ованесу, преодолев сложности магистросовского грабара. Так как исследуемые письма не имеют переводов на новоармянский язык, мы только после представления их содержания в переводе дали необходимые комментарии и оценки, изложив в сносках богатый научный материал, касающийся развернутых в письмах тем, связанных с Библией, армянской, греческой мифологией, археологией и фольклором. Изучены также басни Магистроса, нашедшие место в его письмах.

В третьей главе - **«Письма Григора Магистроса о царстве армянских Багратидов»** мы обратились к письмам, в которых содержатся историко-политические вопросы, адресованные автором католикосу Петросу, царю Гагиду, архимандриту Саргису. Мы представили причины потери государственности Ани, согласно Григору Магистросу.

Выводы, отражающие результаты исследования изложены в разделе **«Заключение»**.

**GRIGOR MAGISTROS' WORKS AMONG MANUSCRIPTS IN THE  
MATENADARAN AFTER MASHTOTS**

The summary of the dissertation for claiming the degree of Candidate of Philological Sciences in the specialization “Armenian medieval and new literature”. – Specialty Code: 10. 01. 01.

The defense of the thesis will be held on 31 May, in 2024, at 12:30 a.m. at the session of the meeting of the 003 Specialized Council of Literature studies at the Institute of Literature after M. Abegyan of the Supreme Certifying Commission of the Republic of Armenia.

Address: 0015, Yerevan, 15 Grigor Lusavorich str.

**SUMMARY**

**The object and subject of the research.**

The **object** of this research the handwritten copies of Grigor Magistros’ works in the Matenadaran after Mashtots are, rich in facts and having scientific value, which will create new ways of comprehending topics raised by the author, and the **subject of the research** the works are, causing difficulties in the context of content and structural questions and requiring scientific justifications.

**The actuality and scientific novelty of the research.**

The subject of this research reflects the **problem** of the chosen topic. The actuality of the topic is conditioned by the fact that the works under study have either not been the subject of scientific analysis or have contradictory evaluations or the previous knowledge about them is not sufficient to shed light on the scientific-educational, didactic, religious issues underlying the content of the works and gently woven into the complex writing of the secular author with an exceptional scriptural knowledge and knowledgeable in various fields of science. Thus, in order to solve the problem of the research, it is necessary to create new knowledge complementing the existing knowledge about Grigor Magistros that will be a **scientific novelty** in its form, content and applicability and will reflect the **innovative feature** of our research work.

**The goals and objectives of the research.**

**The goals are:**

- a) enlightening and reinterpreting G. Magistros’ complex and mysterious writings,
- b) disclosure of the sources used by the master as well as the nuances and methods of using them,
- c) highlighting Magistros’ creative peculiarities (linguistic, structural, genre features, working method),
- d) reinterpretation of the topics discussed in the letters and their literary relations.

The following **issues** were raised:

- a) to study and systematize the handwritten and printed sources summarizing G. Magistros’ works according to certain patterns,
- b) to find out what environments the handwritten copies with the oldest readings originate from,
- c) to compare the discrepancies of manuscripts of Magistros’ letters in question having scientific value with the original manuscripts,
- d) to examine the verses of the letter “Some Monk Named Shapouh” creating complexity in terms of semantic comprehension, the letter "For Students Lazy in Study and All Arrogant



People" starting with the lines "Gangyun bakhian" using a number of other manuscript sources valuable in terms of interpreting the difficult passages of original works along with the manuscripts in question,

e) to consider the structural and content peculiarities of the works under study, compare title discrepancies in the manuscript sources in order to solve the issue of originality and clarify genre issues,

f) to transfer the Grabar originals in question to Modern Armenian with the necessary comments and source references,

g) to analyze the letters referring in detail to the multi-layered topics summarized in them and reassessing their literary value at the same time,

h) to find out Magistros' goals for choosing a certain creative working method,

i) to clarify the issue of genre, one of the most significant issues related to Grigor Magistros' voluminous verse work ("Thousands of Lines"),

j) to study and compare reference information related to the Magistros' grammatical interpretation,

ja) to give the reason for the scarcity of handwritten copies of Magistros' grammar textbook,

jb) to find out in which academic environments and with the efforts of which teachers the master's grammar was circulated,

jc) to evaluate the scientific-cognitive, educational, didactic and practical significance of the Magistros' works.

#### **The scientific hypothesis of the research.**

G. Magistros' creative issues are more subtle when their originals are related to scriptural originals manifesting themselves in innovative genre solutions. Examining the genre question of "Thousands of Lines" allows us to put forward the following hypothesis:

The work "Thousands of lines" which, due to the power of tradition, was circulated as a poem in professional literature without genre evaluation is a stanza with its verse structure in the medieval understanding, a thousand-line verse the volume of which is determined by the choice of the discussed topic and the necessary abundance of the main scriptural episodes and excerpts.

#### **The theoretical and practical significance of the research.**

The clarification and new interpretations of a number of scientific questions related to Grigor Magistros' works under study can complement the theoretical literature on the latter's works as a source.

The practical importance of this research is demonstrated in the fact that the argued and comprehensively analyzed results can be practically applied in universities, both within the framework of the bachelor educational program and master courses. In addition, by dealing with a number of religious, historical, and pedagogical issues with the multilayer nature of the issues it covers, the research can be useful for specialists dealing with the mentioned fields.

**Methods of the research.** The research is based on general scientific (analysis, comparison, abstraction, induction, deduction) and literary (historical, comparative, interpretive) methods.

**Research expertise.** The Chair of Ancient and Medieval Armenian Literature and its Teaching Methodology of Armenian State Pedagogical University recommended the dissertation for public defense after Kh. Abovyan. By decision and guarantee of the session of the Council of the Philological Faculty on May 5, 2023 the book "Grigor Magistros' Works among the Manuscripts of the Matenadaran named after Mashtots" was published based on the dissertation. The results of the research (8 articles) are also published in periodicals approved by the RA SCC.

#### **Structure of the research.**

The research consists of an introduction, three chapters, conclusions, a reference list (235 points).

**The introduction** contains the methodological foundations of the research, the elaboration degree of the topic, the applied methods, the object, subject, actuality, scientific novelty, goals and objectives, theoretical and practical significance, and the formulations of the scientific hypothesis.

In the first chapter, "**Philological examination of Grigor Magistros' complex literary language: issues of the circulation of author's works, genre assessment, questions of creative method selection**", we have applied valuable manuscripts for philological examination of two of G. Magistros' epistels («Կէտ կարթիւ արսկիտի . . .», «Գանգիւն բախիւն . . .»), which are difficult in terms of semantic perception, the discrepancies of which allowed us to highlight the content of the manuscripts under review through presenting their translations into Modern Armenian with necessary justifications and source references. In doing so, we touched upon the literary and didactic values of the originals. We have presented our approaches to the problems of the genre of "Thousands of Lines", trying to clarify the issue of genre evaluation. We have considered "Interpretation of Grammar" from the aspect of following questions: a) Why did Magistros write his interpretation of grammar? b) What was the motive for choosing the method of creating the latter? c) Which teachers used this textbook? d) In which scientific-educational circles was Magistros' interpretation circulated? e) What was the reason for the scarcity of manuscripts of "Interpretation of Grammar"?

In the second chapter, "**Relations of Grigor Magistros' letters to Greek and Armenian mythology, archaeology and folklore**", we analytically presented the contents of the Magistros' letters to Tornik Mamikonian and Archbishop Hovhannes of Syunik overcoming the difficulties posed by the Magistros' Old Armenian. Since the studied papers do not have a translation into Modern Armenian it is only after presenting their contents in translation that we gave our necessary comments and evaluations, setting out in footnotes the rich scientific material related to the topics discussed in the letters relating to the Bible, Armenian and Greek mythology, archaeology and folklore. The fables found in the Magistros' letters collection were also studied.

In the third chapter, "**Grigor Magistros' Letters on the Armenian Kingdom of the Bagratids**", we referred to the author's letters addressed to Catholicos Petros I, King Gagik II, and Vest Sargis, raising historical and political issues. We have outlined the reasons for Ani's loss of statehood according to Grigor Magistros.

We presented the conclusions reflecting the research results in the "**Conclusions**" section.

